բել և ոչ Հայաստանը, որի նիւթական ու տընտեսական վիճակի ապահովութեան և նիւթական բարւոքման համար հիմնվում է ընկերութիւնը։ Մինչ ընկերութեան գործունէութեան շրջանը Կ. Պոլսում պէտք է սահմանափակվի։

Մինչ վերջապէս, երկար փորձերից յետոյ էլ Կ. Պոլսի ինտելիգէնտ՝ գործող դասը չը համոզվեցաւ, որ Կ. Պոլսում նստած Հայաստանի ցաւերին, նրա իրական պէտքերին կարեոր դարման տալը, իրան անհնարին է,—մի ճշմարտութիւն, որ միշտ կրկնում էր «Մշակը» իր տասնամեայ գոյութեան շրջանում։

Ցնդք տարակուսում, որ «Մշակը» կը շտապի իր անելիքն անել։

Էմմանուէլ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Գանձակում այժմ բէվոլվէրը մեծագնով է ծախվում. դա հետևանք է նրան, որ այստեղ մարդու կեանքը ապահով չէ աւազակութիւններից։ Մարդու գլուխ կտրելը հաւասարվել է այժմ սոխի գլխի կտրելուն։ Ո՞վ կարող է ուրանալ վերջին ժամանակների գրեթէ չը տեսնված և չը լսված մարդասպանութեան յաճախակի կրկնվելը։»

—

Մեզ հաղորդում են Գեռաչէնից որ այդ գիւղի հոգևոր դպրոցը այժմ փակված է, ուսուցիչ չը լինելու պատճառով։ Այս մասին մեր թղթակիցը հրաւիրում է թեմական տեսչի ուշադրութիւնը։

—

Ինչպէս մեզ հաղորդում է ՆՈՒԽԻՈՒ մեր թղթակիցը, նուխեցիները չատ առատաձեռն են փող վատնելու մէջ մի քանի դէպքերում, ինչպէս օրինակի համար քէֆ անելում, թուղթ խաղալում և այլն։ Իսկ գրքի կամ լրագրի համար կօպէկն անգամ խնայում են։ Մինչև անգամ երբ նուխեցին հետաքրքրված է մի լրագիր կարդալ, այն ժամանակն էլ աշխատում է ուրիշից ձրի վերցնել և կարդալ, բայց ինքն կաշխատէ փող չը վճարել։ Եթէ բոլոր հայերը նուխեցիներ լինէին, աւելացնում է մեր թղթակիցը, ոչ մի հայոց լրագիր գոյութիւն չէր ունենայ, որովհետև բաժանորդ չէր ունենայ։ «Մշակ» մի քանի օրինակ է ստացվում Նուխում, իսկ «Մեղուն» միայն մի օրինակ ամբողջ քաղաքում, ինչպէս հաւատացնում է մեր թղթակիցը։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Մեր քաղաքից ոչ հեռու Եղիշէ առաքելի վանքում կենում է Օհան վարդապետը, որ 120 տարեկան մի ծերունի է։ Հայր սուրբի դէմքը զուարթ է, շարժվածքները աշխոյժ, խօսակցութիւնը պարզ և կրակոտ, յիշողութիւնը թարմ։ Քան վերստ շուրջը գտնված տեղերը արեղան այցելում է առանց յոգնելու։ Նուխու ամենածեր մարդիկ ասում են, որ երեխայ ժամանակ դարձեալ այդպէս ժիր և զուարթ են յիշում հայր սուրբին։»

—

ԲԱԳՈՒՑ մեզ գրում են հոկտեմբերի 12-ից։ «Անցեալ շաբաթ օր քաղաքային վարչութիւնը հրաւիրել էր ձանյաւորներին որպէս զի առաջարկի նրանց չորս հարցեր վճռելու համար։ Ա. քաղաքային վարչութեան և դիւանի համար նշանակված տարեկան ծախսը մսխված լինելով, նշանակված ծախսից աւելի արած է 200 բուբլ և այդ ծախսը կարօտ է, ի հարկէ, ձայնաւորների վաւերացման։ Բ. քաղաքային այդին պահպանելու համար նշանակված գումարը սպառված լինելով, նոր գումար է խնդրվում այդին պահպանելու համար։ Դեռ երրորդ և չորրորդ հարցերը չառաջարկած, թուրք ձայնաւորներից մինը ասաց, որ ձայնաւորներին փոյթ չէ, թէ ճշմարիտ այդ բոլոր գումարները ծախսած են թէ ոչ, բայց եթէ ծախսած են, թող ինքն քաղաքագլուխը և վարչութեան անդամները պակասը լրացնեն իրանց սեփական միջոցներից, քանի որ գումարից հաստատված նախահաշուից դուրս գումարն են ծախսել։ Քաղաքագլուխը ի զուր աշխատեց ձայնաւորներին համոզել, որ ընդունեն իր առաջարկութիւնը, բայց նրանք համաձայնվելով թուրք ձայնաւորի խօսքի հետ, հաստատեցին իրանց կարծիքի մէջ։ Վարչութեան անդամներից մին, տեսնելով որ առաջին և երկրորդ հարցերը այդպիսի ֆիասկո (անաջողութիւն) կրեցին, յայտնեց ձայնաւորներին թէ միւս հարցերի որոշումը կը յետաձգվի մինչև նրանց մասին ինժենէրից լիովին տեղեկութիւն ստանալը։ Սրանով և փակվեց նիստը։ Եթէ մեր քաղաքային վարչութիւնը փոքր ի շատէ ինքնասիրութիւն ունենար, անմիջապէս նրա բոլոր անդամները պէտք է հրաժարական տային դումայի այդ տեսակ թերահաւատութիւնից յետոյ։ Ժողովուրդը այլ ևս հաւատ չէ ընծայում քաղաքային վարչութեան գործողութեանը, բայց նրա անդամները մնում են պինդ իրանց պաշտօններում։»

—

«Մշակի» ներկայ համարում տպված Բագուի նամակի վրա ուշադրութիւն ենք դարձնում մեր ընթերցողների։ Դա մի հայ արհեստաւորի գրած նամակն է։

—

Պ. Քիւրքճեանի Անիի աւերակների ֆոտոգրաֆիական ժողովածուի համար ՄՕԶԴՈԿԻՑ, պ. Սարգիս Մելքումեանցից ստացանք 20 բուբլ որ և կը հասցնենք պ. Քիւրքճեանին, որպէս զի ուղարկէ իր ժողովածուն։ Միայն յիշեցնում ենք պ. Մելքումեանցին որ նա պէտք է ուղարկի էլ փոստի ծախս 50 կօպէկ, որ կարող է ուղարկել փոստի մարկաներով։

—

«Միացեալ ընկերութեան» համար ստացանք ԴԵՐԲԵՆԴԻՑ, պ. Դասպար Ամիրեանցից 10 բուբլ։

—

Ստացանք բաժանորդագներ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար հետևեալ անձինքներից. Դերբէնդից պ. պ. Դասպար Ամիրեանցից 5 բուբլ և Ղուկաս Թարաջեանից 5 բ., Բագուից պ. Արշակ Եարամիշեանից 8 բուբլ։ Առաջվայ բաժանորդական 1126 բ. 53 կօպէկ գումարի հետ կանի 1144 բ. 53 կօպ.։

—

Վանից ստացած մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Թիֆլիսում հրատարակված Աւետիք Տէր-Յակոբեանցի «Հայաստանի աշխարհագրութիւն» դասագիրքը թիւրքաց տէրութիւնը արգելել է Հայաստանի սահմաններից անցկացնելու։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ հաղորդում են որ այս վերջին օրերը ցրտերը սկսվեցան Նուխու կողմերում և քաղաքային մերձակայ սարերում ձիւնը հաստ քօղով է նստել։ Առաջին հարկաւորութեան մթերքները անմիջապէս թանգացան։

—

Նուխու գաւառի ԴԷՑԲՈՒԼԱՂ գիւղից մեզ գրում են որ այդ գիւղի եկեղեցու գանձապետ Աւետիս Մարտիրոսեանց ահա ութ տարի է որ վարում է իր պաշտօնը և մինչև այժմ ոչ մի կօպէկ արդիւնք չէ ցոյց տուել եկեղեցուն։ Թղթակիցը հարցնում է թէ ուր են գնում փոները։

—

Ստացանք արևելեան լեզուների աւագ ցէնզօր պ. Ս. Մ.-ից 4 բուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Առաջվայ բաժանորդական փողի հետ կանի 1148 բուբլ. 53 կօպէկ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑԵՐԸ ԵՒ ՑՈՑՆԵՐԸ

—

Ս. Պատրիարք Հայրն իւր անուան տօնախմբութեան առթիւ կատարուած ընդունելութեան միջոցին, ազգայնոց վիճակին վրայ ալ դիտողութիւններ ըրած էր։

Արժանահաւատ աղբիւրէ մը կը տեղեկանամք թէ, երբ Ցունաց գեր. Պատրիարքական փոխանորդը Ս. Պատրիարքին հարցուցեր է թէ ինչ վիճակի մէջ են մեր ազգային գործեր, նորին սրբազնութիւն պատասխաներ է թէ յանհունս գոհ է Ազգէն, որ միշտ անկեղծ համակրանք յայտնած է և կը յայտնէ իրեն, այլ յարեր է թէ Հայ մեծատունք Ցոյն մեծատանց չափ զոհողութեան ոգի չունին դժբաղդաբար, զի Ցոյնք հաւատք ունին իրենց ազգութեան վրայ, Հայք գեռ ոչ այնքան։ Ազգին մէջ երկու դասակարգ կայ, յարեր է Ս. Պատրիարքը. մին, երիտասարդութիւնն, որ ազգասէր է և կը ցանկայ դարման տանիլ ազգային վիրաց, այլ դժբաղդաբար նիւթական մեծ միջոցներէ զուրկ է. միւսն, ազգին բարձրագոյն դասն, որ նիւթական միջոցներ ունի, այլ ազգային պաշտօններէ և ծառայութիւններէ կը քաշուի, մինչդեռ Ցոյն հարուստք աւելի ջերմ ազգասիրութիւն ունին։

Ցունաց Պատրիարքական փոխանորդն ալ այսպէս պատասխաներ է. „Մեր ազգին համար ալ ճշմարիտ կրնան ըմբռնուիլ ձեր Սրբազնութեան դիտողութիւնները։ Մեր հարուստներու մէջէն միայն Զարիֆի և ուրիշ սակաւաթիւք կօգնեն մեր Պատրիարքին, այլք անտարբեր կը մնան։ Ահա ֆէնէրի մէջ ուսումնարան մը կանգնելու ձեռնարկեցինք, և շէնքը գանդաղ յառաջ կերթայ, ի չը գոյէ դրամական ձեռնտուութեան։ Երբ ձեր Սրբազնութիւն կը լսէ թէ Ցոյն հարուստք 10—15,000 ոսկի հանգանակեր են, թող չը կարծէ թէ ինքնայօժար նուիրած են։ Մենք միայն գիտեմք թէ մեր Պատրիարքն ի՞նչ տառապանքներ կը կրէ մինչև որ հանգանակութիւն մը յաջողի։“

Ցեռոյ Շահնազարեան վարժարանի, ազգային դաստիարակութեան և ուրիշ խնդրոց վրայ ալ խօսակցութիւնք տեղի ունեցեր են, միշտ մի և նոյն համամտութեամբ և համակրութեամբ։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Բոլոր ազատամիտ լրագիրները վերջին ընտրութիւնների հետևանքը համարում են վերջնական հարուած կառավարութեան համար։ Հակա-պրոգրէսիստական օրգանները մխիթարում են իրանց փոքրամանութեան նշանաւոր ուժերով, հաւատացնելով, որ Բերլինի պրոգրէսիստական „փոքրիկ խումբը“ անպատճառ կը քայքայվի հետևեալ ընտրութիւնների ժամանակ։ Բոլոր մեծ և միջին քաղաքները իշխան Բիսմարկի քաղաքականութեան դէմ ձայն տուին։ Ամենից շատ յաղթվեցան ազգայնա-ազատամիտները։ Բայց պահպանողականները ևս կորցրին իրան մի քանի նախկին պատգամաւորական տեղերը։ Իշխան Բիսմարկի (կանցլէրի որդու) ընտրութիւնը Միւլհաուզէնում վիճելի է համարվում։ Սոցիալիստական կանդիդատները կրկնաքուէարկութեան կենթարկվին Բերլինում, Դրէզդէնում, Լէյպցիգում, Ֆրանկֆուրտում, Մագդէմբուրգում, Նիւրնբէրգում և Համբուրգում։ Առաջուց կարելի է նախագուշակել, որ առաջադէմ ազատամիտների կուսակցութիւնը շատ կը զօրեղանայ րէյխստագում։ Բերլինի վեց ընտրողական շրջաններից չորսում միացեալ ազատամիտները յաղթեցին, իսկ մնացած երկուսում կրկնաքուէարկութիւն կը լինի ազատամիտների և սոցիալ-դէմոկրատների կանդիդատների մէջ։ „Հակա-պրոգրէսիստական“ միութիւնը կատարելապէս յաղթվեցաւ։ Վերջին երկու շրջաններից մէկը (չորրորդը) սոցիալ-դէմոկրատներին էր պատկանում, և եթէ նրանք վեցերորդումն էլ կը յաղթեն, այն ժամանակ ռէյխստագում սոցիալ-դէմոկրատները մէկ աւելորդ ձայն կը ստանան։ Հակա-ազատամիտների միութեան գործ դրած բոլոր ջանքերից յետոյ մէկ այդպիսի հետևանքը հաւասար է վերջնականապէս յաղթվելուն։ Ներկայ ընտրողական կռիւը, ամենատարիքը կարելի է անուանել 1849 թուից մինչև այժմ եղած կռիւների մէջ։

Վերջին ժամանակներում սոցիալ-դէմոկրատական կուսակցութիւնը շատ շրջաններում վերջին տեղն ունէր բռնած, և մինչև անգամ այնտեղ, ուր, ինչպէս Բերլինի երկու շրջաններում, նա ընտրութիւնների օրը նշանաւոր ուժերով յայտնվեցաւ,—ստիպված էր բոլորովին չէզոք պահել իրան, այնպէս որ նրա գոյութեանը հազիւ էին հաւատում։ Անցեալ շաբաթվայ կռիւ մէջ մասնակցում էին գլխաւորապէս, մէկ կողմից ազատամիտները, միւս կողմից հակա-պրոգրէսիստները, այսինքն բէակցիոնները, կղերականները, դիկտատուրայի կողմնակիցները, որոնք պետական սոցիալիզմ են երազում, կամ, վերջապէս, բաղդախնդիրները։

Հոկտեմբերի 28-ին, երեկոյեան, Բերլինում, ընտրութիւններից յետոյ հակասեմիտական անկարգութիւններ պատահեցան։ Մարդկանց խումբեր մտան էին գալիս փողոցներում և աղաղակում էին հրէաների դէմ։ Մի քանի տեղ նշանաւոր կռիւներ պատահեցան։

ՖՐԱՆՍԻԱ

—

Արտասպում ենք Գամբէտտայի Հավրում ասած ճառի աւելի նշանաւոր տեղերը։ „Ներկայումս, Ֆրանսիան, վերադարձնելով և ապահովելով իր ազատութիւնը, կարող է պարապվել իր բարոյական շահերի զարգացմամբ, որոնք, դէմոկրատական հասարակութեան մէջ, յենված աշխատանքի վրա, չեն կարող բաժանված լինել ազգաբնակութեան նիւթական շահերից։ Ահա թէ ինչի համար մի քանի ժամանակից ես աշխատում եմ մօտենալ գործնական մարդկանց, բանւորների ընկերութիւններին, դիմելով մի կողմից այնպիսի մարդկանց, որոնք ապրելու ուրիշ միջոցներ չունեն, բացի իրանց ձեռքերի աշխատանքը, միւս կողմից—նրանց, որոնք նուիրում են իրանց խելքը և եռանդը ձեռնարկութիւններին, որոնք կենդանացնում են աշխատանքը կապիտալ դնելով նրա մէջ և որոնք նրանից իսկական ազգային ոյժ են դարձնում։ Ուրախութիւն պատճառելով Ֆրանսիային զգալ իրան ազգերի մէջ առաջինը (բուռն ծափահարութիւններ)։ Մենք բոլորս պարտաւոր ենք համարձակ և առանց շեղվելու դիմել բարձր իդէալներին և գնալ այդ ճանապարհով հաստատ քայլերով, չը յափշտակվելով բաղդախնդրութեան ոգւով և երազներով, բայց և չը յուսահատվելով և չը սառչելով։ Մենք տեսնում ենք, թէ ինչ է պակաս այս (Հավրեան) նաւահանգստին, որ կարողանայ մրցել ուրիշ նաւահանգիստների հետ։ Ես մատնացոյց եմ անում ոչ թէ մեր նաւահանգիստների վրա, այլ նրանց վրա, որոնք մեր հանդէպ են գտնվում (ծափահարութիւն) աւելի բարձր, և ոչ թէ միայն հիւսիսային ծովի լճում, այլ կրկին բարձր, Բրէմէնում, Համբուրգում։ Բոլոր սուերից յետոյ, որոնք պատմվում էին և տպագրվում էին, ինձ, ճշմարիտն ասած, ախորժելի է խոստովանել, թէ ինչի համար էի գնացել Գերմանիա, և ինչ տեսայ այնտեղ։ Ես ճանապարհորդում էի այնտեղ ծանօթանալու համար Բրէմէնի, Համբուրգի, Լիւբէկի և Շտէտինի առևտրական նաւահանգիստների զարգացման առաջադիմու-